

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ «ԳԵՂՈՒՆԻ» ԷԶԵՐՈՒՄ

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան կարեւոր հրատարակութիւններից է «Գեղումի» պատմաբանասիրական եւ գրական գեղարուեստական պատկերազարդ հանդէսը, որ լոյս է տեսել Սուրբ Ղազարում, 1901-1906 թուականներին, 1909ին, 1927ին, 1947ին եւ 1950ին: «Գեղումի»ի համարներից երկուսը յոբելեանական էին: 1927ի «Գեղումի»ն նուիրուած էր «Բազմավէպ»ի ստեղծման 100ամեակին, իսկ 1947 թուականին՝ Մխիթար Մեբաստացու մահուան 200ամեայ տարելիցին:

«Գեղումի»ի խմբագիրներն էին բնագէտ, գրականագէտ, բանասէր Հ. Սիմոն Երեմեանը¹ (Տրապիզոն, 1871-1936, Միլան)

¹ Հ. Ս. Երեմեանն ուսանել է ծննդավայր Տրապիզոնում, ապա Վենետիկի Մխիթարեանների մօտ, 1895ին դարձել միաբանութեան անդամ: 1899-1905 խմբագրել է «Բազմավէպ»ը, 1901ից՝ նաեւ «Գեղումի» հանդէսը: 1896ին Վենետիկում նա հրատարակել է «Նոր կենդանաբանութիւն եւ մարդաբանութիւն պատմական եւ նկարագրական», 1898ին՝ «Տարւիմականութիւն կամ տեսակաց եւ մարդու ծագման խնդիրը», 1901-ին՝ «Հայ բժշկաբանք» աշխատութիւնները, ինչպէս նաեւ «Պատկերազարդ բառգիրք գործնական գիտութեանց» (1900) աշխատութիւն-հանրագիտարանը: Հեղինակել է գեղարուեստական ստեղծագործութիւններ՝ «Տուրկին» (1903), «Տագնապը» (1904) վիպակները, «Անէծք» (1903), «Սաթնիկ» (1904), «Ուխտը» (1905) ողբերգութիւնները, արձակ բանաստեղծութիւններ, յուշեր, ինչպէս նաեւ գրականագիտական ուսումնասիրութիւններ՝ «Կենսագրութիւն Հ. Ղևնդ Ալիշանի» (1902), «Գրական պատմութիւն եւ գեղեցիկը» (1915), «Գրագէտ հայեր» 10 հատորանոց աշխատութիւնը (1913-1933), որտեղ տրուած են հայ մշակութային գործիչներ Հ. Ղևնդ Ալիշանի, Ղազարոս Աղայեանի, Մատթէոս Մամուրեանի, Յակոբ Պարոնեանի, Տիգրան Կամսա-րականի եւ այլոց դիմանկար-քնութագրականները: (ՇՏԻԿԵՍԱՆ, Ս., *Երեմեան Սիմոն*, ի Հայկական սովետական հանրագիտարան, Գ., Երեւան 1977, 546:

*եւ Հանրագիտակ, Հայագէտ, Հրապարակագիր, գրող Հ. Մկրտիչ Պոտուրեանը*² (Պարտիզակ, 1881-1959, էջմիածին):

- 2 Հ. Մ. Պոտուրեանը նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրի՝ Պարտիզակի Ներսէսեան եւ Մխիթարեան վարժարաններում: 1897ին մեկնել է Վենետիկ, ուսանել հայագետներ Հ. Վարդան Հացունու եւ Հ. Արսէն Ղազիկեանի մօտ, 1902ին դարձել է Մխիթարեան միաբանութեան անդամ: 1903ին դասուանողել է Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանում, որտեղ նրան աշակերտել են Դանիէլ Վարուժանը, Վարդան Փափագեանը եւ այլք: 1909ին խմբագրել է «Բազմավեպ» հանդէսը, 1909-1911 եղել մատենադարանապետ: Այնուհետեւ եղիսաբէթուպոլսում գրադուել է գիտական, լրագրական եւ մանկավարժական աշխատանքով: 1929-1959 եղել է Տրանսիլուանիայի Ֆրումուսա (նախկին Սեպվիզ) ւանի հունգարացած հայերի հոգեւոր առաջնորդը. այստեղ հիմնել է տպարան, ծաւալել հրատարակչական ու մանկավարժական բուռն գործունեութիւն: 1959ին տեղափոխուել է Խորհրդային Հայաստան: Հ. Մ. Պոտուրեանը լոյս է ընծայել «Զարդանկարք Աւետարանի Մլխէ Բագուհոյ» (1902): Տպագրուել են նա «Կոստանդին Երզնկացի ժԳ. դարոյ ժողովրդական բանաստեղծ եւ իւր բերքուածները» (1905), «Ադամագիրք Առաքել Սիւնեցոյ» (1907), «Առաքել Սիւնեցի եւ իր բերքուածները» (1914), «Մարտիրոս Ղրիմեցի եւ իր բերքուածները» (1924-1930) եւ այլ գրքեր:

Պոտուրեանի գրչին են պատկանում Յովհաննէս Երզնկացու, Ֆրիկի, Յովհաննէս Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու, Բաղդասար Դպիրի եւ միջնադարեան այլ բանաստեղծների մասին ուսումնասիրութիւններ: Գրել է նաեւ բանասիրութեանը («Սրբազան Հայկագունք», 1902, «Մխիթար եւ Մխիթարեանք», 1922), մամուլի պատմութեանը («Հայ մամուլը տասնեւհինգ տարուն մէջ. 1894-1909») վերաբերող գործեր: Բուխարեստում Պոտուրեանը հրատարակել է «Մասիս» (1920-1922), «Գաղութի ձայն» (1923), «Նաւասարդ» (1923-1924, Հ. Սիրունու եւ Հ. Աթանասեանի հետ), «Փարոս» (1924, Վ. Մեշտումեանի հետ), «Երկիր» (1925-1929), «Հայ մամուլ» (1934-1942, Հ. Աթանասեանի հետ) պարբերականները, տարեցոյցներ («Գաղութահայ տարեգիրք», 1939-1941, «Ռումինահայ տարեցոյց», 1935, Հ. Աթանասեանի հետ): «Սեւ էջը» (1910), «Արմենակին յոյսերը» (1923) եւ «Կարմիր լուսին» (1927) պատմութեանը Պոտուրեանն արտացոլել է հայ ժողովրդի տառապանքները: Նա ստեղծագործել է նաեւ մանուկների համար. «Վեպիկներ», «Հէֆիաթներ» թարգմանել է հունգարերէնից (1930): Նրա որոշ երկեր թարգմանուել են ռումիներէն եւ հունգարերէն: Կատարել է թարգմանութիւններ իտալերէնից եւ հունգարերէնից: Պոտուրեանը հայ հանրագիտական գրականութեան հիմնադիրներից է:

(ՔՈԼԱՆՁԵԱՆ, Հ., *Պոտուրեան Մկրտիչ, ի Հայկական սովետական հանրագիտարան, IX, Երեւան 1983, 389*):

«Գեղումի»ի նպատակն էր ընթերցողներին ծանոթացնել հայ եւ համաշխարհային արուեստի՝ կերպարուեստի, գրականութեան, երաժշտութեան, ճարտարապետութեան դասականների գործերին (Ռոսսինի, Դոնիցետտի, Բելլինի, Վերդի, Է. Շահին, Յ. Ալվազովսկի, Կոմիտաս, Տասսոյ, Մ. Սարեան, Գառզու, Հ. Ալիազեան, Վ. Մախոխեան, Գ. Շիլդեան եւ այլք), բարձրացնել նրանց գեղարուեստական ճաշակը, հետաքրքրութիւն առաջացնել հայ արուեստագէտներին հանդէպ:

Հանդէսի պատմաբանասիրական, գրականագիտական եւ արուեստագիտական բաժիններում ուսումնասիրութիւններ ունեն Լէոն, Հ. Սիմոն Երեմեանը, Հ. Սուքիաս Էփրիկեանը, Թորոս Թորամանեանը, Մաղաքիա Զեվահիրճեանը եւ այլք³:

«Գեղումի»ի էջերում թարգմանութիւններով եւ սեփական ստեղծագործութիւններով հանդէս են եկել Եղիշէ եպս. Դուրեանը, Վրթանէս Փափազեանը, Դանիէլ Վարուժանը, Սուրէն Պարթեւեանը, Ալեքսանդր Շիրվանզադէն, Ռուբէն Սեւակը, Լեւոն-Զաւէն Սիւրմէլեանը, Վիլեամ Սարոյեանը, Կոստան Զարեանը եւ այլք:

«Գեղումի»ն վերջին տարիներին մեծ տեղ է յատկացրել Սովետական Հայաստանի մշակույթի, գիտութեան վերելքին:

Մեր զեկուցման նպատակն է ներկայացնել հայ երաժշտութիւնը «Գեղումի»ի էջերում:

Պատկերազարդ հայաթերթի անդրանիկ համարը լոյս է տեսել 1901 թուականի Դեկտեմբերի 1ին: «Գեղումի պատկերազարդ հայաթերթս երկու ամիսը մէկ անգամ կը հրատարակուի: Ասոր մահուր հասոյթին կ'ետը՝ առանց կրօնի խտրութեան պիտի յատկացուի ազգիս որբիկներուն»⁴: Հայաթերթի նպատակն էր «Նախ փոքրիկ թիկունք մ'ըլլալ մեր կարօտելոց, եւ երկրորդաբար ներշնչել ազգին գեղեցիկին ճաշակը, կարողում ենք խմբագրի՝ Հ. Ս. Երեմեանի «Օգնենք եւ գործենք» առաջնորդող յօդուածում, կը փութամք ըսելու որ մեր պաշտօնական թերթն կը մնայ դարձեալ «Բազմավէպ»ը, իսկ սա՝ կը հրատարակուի ներկայ խմբագրութեանս իրրեւ առանձնական մի աշխատութիւն»⁵:

³ ՔէՇԻՇԵԱՆ, Գ., Գեղումի, ի Հայկական սովետական համրագիտարան, III, Երեւան 1977, 7:

⁴ ԵՐԵՄԵԱՆ, Հ. Ս., Օգնենք եւ գործենք, ի Գեղումի, Ս. Ղազար, Վեներաիկ 1901, Ա., 3:

⁵ Նոյն:

1901 Յունուարի 27ին Միլանում վախճանուեց Վերդին:
1901ի «Մուրմ»ի Փետրուարեան համարում տպագրուում է Ք. Կարա-մուրզայի «Ջուզեպպե Վերդի» յօդուածը: Խտալացի հռչակաւոր կոմպոզիտորի մահուան առթիւ գրուած յօդուածում հեղինակն ընթերցողին բաւական մանրամասն ներկայացնում է Ջ. Վերդիի կեանքի եւ գործունէութեան մասին ուշագրաւ տեղեկութիւններ⁶: Իսկ 1904ին «Տարագում» տպագրուում է Կոմիտասի «Յովսէփ Վերդի» յօդուածը:

Ի յիշատակ իտալացի Մանետրոյի՝ «Գեղունի»ի առաջին համարում տպագրուում է Վերդիի «Աիդա» օպերայի առաջին եւ երկրորդ գործողութիւնների տետրակի՝ Հ. Արսէն Ղազիկեանի հայերէն թարգմանութիւնը⁷:

1901 Նոյեմբերի 9ին Վենետիկում, Սուրբ Ղազարում վախճանուում է հայ բանաստեղծ, բանասէր, պատմաբան, աշխարհագրագէտ, թարգմանիչ, Վենետիկի Միսիթարեան միաբանութեան անդամ Հ. Ղեւոնդ Ալիշանը (1820-1901): Ալիշանի վախճանից ընդամէնը մի քանի շաբաթ անց լոյս տեսած «Գեղունի»ի առաջին համարում տեղ գտած նիւթերի մէծ մասն առնչուում է Հ. Ղեւոնդ Ալիշանին: Ուստի եւ հայ երաժշտութեանն առնչուող յօդուածներ չկան:

1902 Մարտի 27ին, Թիֆլիսում, 49 տարեկանում վախճանուում է հայ անուանի երգահան, խմբավար, մանկավարժ, երաժշտական հասարակական գործիչ Քրիստափոր Կարա-Մուրզան: Նրա մահուանն արձագանքում են նաեւ Վենետիկի Միսիթարեանները՝ «Բազմավէպ»ի 1902 Սեպտեմբեր-Հոկտեմբերի համարում տպագրուում է Յով. Կարապետեանի «Քրիստափոր Կարա-Մուրզա (Կարա-Մուրզայի կեանքն ու գործունէութիւնը)» ծաւալուն յօդուածը, իսկ «Գեղունի»ի 1902 4-5-6 համարներում՝ հայ արձակագիր, հասարակական գործիչ, Կարա-մուրզայի «Շուշան» անաւարտ օպերա-

6 ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ, Ք., *Ջուզեպպե Վերդի*, Ի Մուրմ, 1901, Թիւ 2, Փետրբար, 274-282:

7 Ի դէպ՝ Հ. Ա. Ղազիկեանը թարգմանել էր եւրոպական դասական եւ իր ժամանակի բանաստեղծների շատ երկեր, այդ թւում՝ Հովհերոսի «Խիականք» (1911) եւ «Ողիսականք» (1924): Նա զարգացումն ունի աստիճանի է հասցրել արեւմտահայ բանաստեղծական լեզուն եւ հայերէնի անադարտութեան ջատագով լինելու համար ստացել է «պահապան հրեշտակի» կոչումը՝ մականունը: (ՇՏԻԿԵԱՆ, Ս. - ԻՇԽԱՆԵԱՆ, Ռ., *Ղազիկեան Արսէն*, Ի Հայկական սովետական հանրագիտարան, VII, Երեւան 1981, 23:

յի տետրակի հեղինակ Ատրպետի (Սարգիս Մուկայաճեան) «Կա-
րա-մուրգան (յիշողութիւններից)» գրութիւնը, որտեղ Ատրպետը հե-
տաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում «Շուշան» օպերայի ստեղծ-
ման վերաբերեալ:

«Գեղունի»-ի 1904 տարեկան միացեալ համարի 72-73 էջե-
րում գետեղում է Հ. Ն. Տիրացուեանի «Յ. Սիմանեան երաժիշտ եւ
իւր խումբը» վերտառութեամբ յօդուածը⁸:

Ինչպէս գիտենք, Յարութիւն Սինանեանի հայրը՝ Գրիգոր
Սիմանեանը (1836-1914), ով ջութակ նուագել սկսել էր 16-17
տարեկանից, հիմնադիրն էր Կոստանդնուպոլսում առաջին եւրո-
պական տիպի երաժշտական դպրոցներից մէկի, ուր կէս դար շա-
րունակ երաժշտական կրթութիւն են ստացել բազմաթիւ դաշնա-
կահարներ, լարային ու փողային գործիքներ նուագողներ: Գրի-
գոր Սինանեանն առաջին հայկական համանուագախմբի (սիմֆո-
նիկ) (Սինանեան նուագախումբ) ստեղծողն էր եւ լուրջ ուշադ-
րութիւն էր դարձնում որդու՝ Յարութիւնի երաժշտական ընդու-
նակութիւնների զարգացմանը. «Նրան պատրաստում է ոչ միայն
որպէս ջութակահար, այլեւ՝ նուագախմբի ղեկավար: Եւ երբ տարիքն
առնելով արդէն ի վիճակի չէր ղեկավարել իր կազմակերպած նուա-
գախումբը, նա այդ գործը յանձնարարում է որդուն, որ պատուով
շարունակում է այն»⁹: Եւ իսկապէս՝ ջութակահար, դաշնակահար,
երգեհոնահար, երաժշտահան, ղեկավար, երաժշտական-հասարակա-
կան գործիչ Յարութիւն Գրիգորի Սիմանեանը (1872-1939) շարու-
նակեց հօր գործը, դարձաւ Սինանեան նուագախմբի յաջորդ
կազմակերպիչն ու ղեկավարը:

Յ. Սինանեանը 16 տարեկանում արդէն առաջնակարգ ջու-
թակահար էր եւ յաճախակի հանդէս էր գալիս համերգներում՝
կատարելով ջութակի համար գրուած խրթին ստեղծագործու-
թիւններ: Որպէս ջութակահար հանդէս է եկել ոչ միայն Թուր-
քիայում, այլեւ Եգիպտոսում, Անգլիայում եւ Ֆրանսիայում:

Նա կատարելապէս տիրապետում էր դաշնամուրին եւ ստեղ-
ծագործում: «Վարդովեանի քաւորնի քայֆայումից յետոյ, դերասան
Մնակեանի յանձնարարութեամբ, 1888 թուին կազմակերպում է նոր նը-

⁸ ՏԻՐԱՏՈՒԵԱՆ, Հ. Ն., Յ. Սիմանեան երաժիշտ եւ իւր խումբը, ի Գեղունի,
1904, 72-73:

⁹ ՄՈՒՐԱՏԵԱՆ, Մ., Ռոմագիծ արեւմտահայ երաժշտութեան պատմութեան,
Երեւան, 1989, էջ 211:

ւագախումբ, որ յայտնի է դառնում «Հայ խումբ» կամ «Մինանեան խումբ» անունով»¹⁰։ Յ. Մինանեանն ստեղծում է կատարողական բարձր մակարդակի նուազախումբ, որի հետ մասնակցում է Մնակեանի թատերախմբի ներկայացումներին, հանդէս գալիս համերգներում։

«Յ. Մինանեան իւր այս խումբով տասնեակ մը տարիներ Պոլսոյ նուագասերներու ուշադրութիւնը եւ զմայլումը իւր վրայ կեդրոնացնելէ յետոյ, երբ տեւական փառք մը վայելելու աստիճանի հասած էր, - գրում է Տիրացուեանը, - յանկարծ կեանքի պատահարներու դառնութենէն կարծես շանթահարուած՝ այլ եւս չքարճարացաւ խումբը կառավարելու քեմին վրայ, եւ նոյն իսկ բոլորովին փաշտեցաւ հրապարակէն։ Իւր խումբը իրեն Անտոն եղբոր առաջնորդութեան յանձնած ըլլալով, երբ սա եռանդով սկսած էր երեկոյթներ եւ համդէսներ սարքել, վրայ հասան 1896ի դէպքերը՝ որուն զոհ գացին Օմնիկ եւ Եղիա երաժիշտները. եւ ընդհատեցաւ նաեւ այդ կանոնաւոր Հայ երաժշտաց խումբի գործունէութիւնը եւ կեանքը»¹¹։

Ի դէպ՝ Օննիկը նուագախմբի երկրորդ ջութակն էր, խոստումնալից երիտասարդ, իսկ Եղիա Քեսեճեանը կոնտրաբասահարն էր՝ թրքահայոց մէջ միակ կոնտրաբասահարը, նուագախմբի տրոմբոնահար Սմբատ Քեսեճեանի եղբայրը։

Հօր կազմակերպած դպրոցում Յարութիւնը ջութակի դասեր է տալիս, բայց ինքն էլ սովորում էր Տիգրան Չուխաճեանի մօտ՝ խորացնելով իր երաժշտական-տեսական գիտելիքները։ Չուխաճեանի դրական գնահատականին են արժանանում նրա ստեղծագործական առաջին փորձերը՝ քալերգերը, վալսերը, մազուրկաները, պոլկաները, ժողովրդական եւ հայրենասիրական երգերի մշակումները, որոնցում նա շարունակում էր Տիգրան Չուխաճեանի ստեղծագործական սկզբունքները։

«Ազգ մը որքան աւելի տաղանդներ եւ հանճարներ հասցընէ՝ այնքան աւելի նա մարդկութեան օգտակար կը հանդիսանայ։

Հայու արժանաւորութիւնը այս մասին կարող է պարծիլ՝ քանի որ ան՝ հաւասար Եւրոպական ազգերու՝ ոչ միայն նրբամիտ փառաբազէտներ, զօրավարներ, ճարտար արհեստագէտներ հասուցած է ու կը հասցընէ, այլ նաեւ միշտ ընդհանուր ազգերէ գնահատուող եւ ծափահարուող ընտիր անհատներ կը ծնուցանէ։

10 Անդ։

11 ՏԻՐԱՏՐԵԱՆ, Հ. Ն., նշ. աշխ., 73։

Գեղումիի ընթերցողներուն կը ներկայացընենք այնպիսի հայ անուան պատուաբեր անհատ մը, յանձին Յ. Սինանեան երաժշտին:

Այս անձը, արդէն՝ հայ նուագասէր եւ նուագածու դասակարգին ծանօթ է իւր 30ի մօտ երաժշտական տետրերու հրատարակութիւններովը: Սակայն ինքը, ոչ միայն գնահատուած է Բիւզանդիոնի թրքահայ եւ օտարագգի մամուլներէ, այլ նաեւ արտասահմանի զանազան թերթերը գովեստով խօսած են իւր ամէն լոյս տեսած գործերու մասին: Իսկ մենք՝ ներկայ տարւոյս Բազմավէպի Փետրուար թերթին եւ Յուլիսի 336 էջին մէջ՝ իր կենաց եւ գործերու գլխաւոր գիծերը դուրս ցատկեցուցած ըլլալով՝ այժմ կը գոհանանք նկատողութեան առնուլ իր արժանիքը իբր հայ երաժիշտ, իբր հեղինակ զանազան կրտսերներու եւ մանաւանդ իբր երգիչ Մխիթարեան Քայլերգի եւ այլն»¹²:

32ամեայ երաժշտի մասին յօդուածագիրը գրում է՝ «Ինքը միակ երաժիշտն է որ Ասիական մեղեդիներու դաշնակութիւնը ամենահիշդ եւ ախորժելի ոգով կը լսեցընէ՝ Արեւմտեան քաղցրածայնութեան վարժ ականջներու, թէ եւ չունենայ հանգուցեալ Զուհանեանի վսեմ աւիւնները: Մեր այս դատաստանին ճշդութեան համոզումը այնքան աւելի կը շեշտուի՝ որքան հասկացող անձ մը իւր կտորները գարնէ կամ լսէ եւ բաղդատէ Զուհանեանի հեղինակութեանցը հետ»¹³:

Այնուհետեւ հեղինակն անդրադառնում է Յ. Սինանեանի ստեղծագործութիւնների բնութագրմանը, քննութեան առնում Dezdemonia եւ Gaîté կադրիլները, Zaza դաշնամուրային քայլերգը, Fan-ny մագուրկան...

«Լա յաջողած կը գտնենք նաեւ իր վերջին կարեւոր գործը, Մխիթարեան-ֆայլերգը: Ընտիր թղթի վրայ սպուած այս գեղեցիկ հեղինակութեան ճակատը բռնած է Լուսանորոգն Մխիթարայ վիմատիպ պատկերը՝ հետեւեալ ընծայականով.

Dédiée à la mémoire du
Grand Méchitar
Fondateur des Congrégations
Des Méchitaristes
Marche Méchitar
Pour piano
Par
P. Sinanian¹⁴

¹² Ա.Աղ., 72:

¹³ Ա.Աղ.:

¹⁴ Ա.Աղ., 73:

Յօդուածում տպագրուած են Քայլերգի խազերը:

«Այս Քայլերգը կը սկսի Արեւելեան գողտրիկ գեղգեղանքի մը հեշտութիւնը ներշնչող եղանակով մը՝ որ իսկոյն կը գուգախառնի Եւրոպական ներդաշնակ դայլայլիկի հետ: Սկիզբը եւ մարմինը ամեմաբնութիւն են՝ իսկ Խտական աշխոյժ ելեւէջներով աւարտող վերջաբանը շուտափոյթ եւ անակնկալ կը դատենք: Որքան պիտի գոհանային բանիմաց երաժշտասէրները եթէ այդ վերջաբանը ճշիկ մ'աւելի երկարէր, որով լսողը դեռ աւելի կը գմայլէր եւ գոհ սրտով կը մնար»¹⁵:

Այնուհետեւ յօդուածագիրը մէջբերում է անում «Մշակի» 1904 Յուլիսի 19ի Թիւ 137 համարում տպագրուած «Քայլերգ Միսիքարի յիշատակին» յօդուածից, որտեղ մասնաւորապէս նշուած է. «Երաժշտական ներկայ աշխատութիւնը ընդհանրապէս աջողուած մի գործ է: Նա ակորդեիի է լսողութեան համար եւ ունի արտայայտիչ բնաւորութիւն: Սկսում է մի փոքր ներածութեամբ, որ ձգտում է հանդիսաւոր մի կոչի նմանելու: Այնուհետեւ գալիս է մի գողտրիկ երաժշտական պատմութիւն, որի մէջ, այնպէս է թւում, թէ՛ արտայայտուած են Միսիքարի ջանքերը գործունէութիւն կազակերպելու, այդտեղ լսում են եւ մեղմ յորդորներ, եւ յոյս եւ մի ափողուած վիշտ: Այնուհետեւ հանդէս են գալիս բուն փոփոխութիւններ իսկ վերջում լսում է մի գուարթ խայտանք եւ ուրախութիւն»¹⁶:

Յօդուածի երկրորդ բաժնում հեղինակը ներկայացնում է Յ. Սինանեանի ղեկավարած նուագախմբի անդամների համառօտ կենսագրականները եւ լուսանկարը:

Եզրափակելով իր յօդուածը՝ հեղինակը գրում է. «Թուի թէ այժմ Պր. Յ. Սինանեանի խորապէս վիրաւորուած սիրտը բուժիլ սկսած է: Եւ յիրաւի իմքը որ տարիներէ ի վեր մոռացութեան ֆօղի տակ ծածկուած էր եւ իւր Մուսան լուրթեան դատապարտած՝ անցեալ տարուրնէ սկսելով՝ խզեց այդ կապանքը, եւ հետգհետէ ի լոյս ընծայեց նորանոր երկեր: Յուսալի է որ այդ քեղմնաւոր տաղանդը իր անխոնջաբար աշխատելու դրութիւնը վերստին ձեռք առնելով՝ դեռ աւելի նշանաւոր գործերու հեղինակը հանդիսանայ եւ ըլլայ հայ երաժշտաց դասակարգին շողշողուն աստղը»¹⁷:

15 Անդ:

16 ՍԻՐՈՂ, Քայլերգ Միսիքարի յիշատակին, ի Մշակ, 1904, Թիւ 137, 19 Յուլիս:

17 ՏԻՐԱՅՈՒԵԱՆ, Հ. Ն., նշ. աշխ., 73:

Եւ իսկապէս՝ Տ. Զուխանեանի մահից յետոյ հէնց Յարութիւն Սիւնանեանը «Արշակ Բ.» օպերայի նախերգանքը վերածեց կլաւիրի եւ սեփական միջոցներով տպագրեց 700 օրինակ, որի վաճառքից ստացուած հասոյթով էլ 1907ին Իզմիրի գերեզմանատանը Զուխանեանի շիրմին կանգնեցուեց մեծ վարպետի մահարձանը...

«Գեղունի»ի 1905 եւ 1906 թուականների համարներում եւրոպացիներին վերաբերեալ յօդուածներն իսպառ բացակայում են:

«Գեղունի»ն էջեր է յատկացնում նաեւ ԿՈՄԻՏԱՍԻՆ՝ 1909ի համարում տպագրելով Կոմիտասի լուսանկարն ու «ախ, մարալ ջան» խմբերգի խաղերը: 1909 Յունիսի 12ին էջմիածնից Կոմիտասը նամակ է գրում Վենետիկ՝ Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Ղեւոնդ Տայեանին: Նամակում անդրադառնալով իր գործունէութեանը՝ Թիֆլիսում տուած համերգներին, Կոմիտասը գրում է. «Երկուսն էլ յաջող եւ գովական անցան. մանաւանդ երկրորդի մէջ՝ մրցման հանդիսից նախապատիւ եղաւ հայ խումբը, որ բաղկացած էր ներսիսեան հոգեւոր Դպրանոցի սաներից՝ թուով 80 հոգի»¹⁸: Ապա իր երախտագիտութիւնն է յայտնում. «Սրտագին շնորհակալութիւնս, եղբայր պատուական, Ձեր անկեղծ եւ սիրալիր զգացմանց համար. Ձեր խրախոյսներն ինձ եռանդ են ներշնչում եւ ոգեւորութիւն առթում. մի բան, որ այնքան բիշ են հասկանում եւ գնահատում մեզանում: Անհատը որքան էլ ջանասէր լինի, այնու ամենայնիւ խրախոյսը մի հզօր խթան է, որ կարող է շրջել սարեր հիմն ի վեր»¹⁹:

Այս նամակն առաջին անգամ հրատարակել է Հ. Ղեւոնդ Տայեան՝ «Կոմիտաս վարդապետ» յօդուածում, որ լոյս է տեսել Կոմիտասի մահից յետոյ՝ «Բազմավէպ»ի 1936թ. առաջին համարում:

Նոյն օրը Կոմիտաս Հ. Ղ. Տայեանին է ուղարկում իր լուսանկարը՝ «Յիշատակ բարեկամութեան» մականգրութեամբ եւ «ախ, մարալ ջան» երգի օրինակը՝ «Գեղունի»ում հրատարակելու նպատակով:

Շարունակելով Կոմիտասեան թեման «Գեղունի»ի էջերում, նշենք, որ 1947 թուականի համարում տպագրւում է Կոմիտասի մասին առաջին մենագրութեան՝ 1931ին Կ. Պոլսում լոյս տեսած

¹⁸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, Նամակների, Երեւան 2009, 163:

¹⁹ Անդ, 163-164:

«Կոմիտաս վարդապետ. իր կեանքն ու գործունեությունը» *գրքի հեղինակ Թորոս Ազատեանի* «Կոմիտաս վարդապետի դիւանը» *յօդուածը*: *Իրաւացիօրէն նկատելով, որ* «մեր գեղարուեստական գրականութեան մէջ Կոմիտաս վարդապետ միակն է, որ իրրել վերանորոգիչ Հայ Հոգեւոր ու գեղջուկ երաժշտութեան, թէ՛ իր կենդանութեան եւ թէ յետ մահու, անընդմէջ նիւթ դարձած է լուրջ ուսումնասիրութեան՝ իր բազմերանգ վաստակով: Արդարեւ, Հայ պարբերական մամուլը առիթներ տուած է միշտ մօտենալու անմահ վարպետին կեանքին ու քեղուն գործունեութեան, նոր հայեացքով մը ի վեր հանելու անոր ստեղծագործ տաղանդին, անոր մոգական արուեստին այլազան երեսներն ու անհասարար արժէքը»²⁰:

«Գեղունի»-ի *կողմից այդ յօդուածը գրելու առաջարկը ստանալիս Թ. Ազատեանն իր սեղանին արդէն ունէր Կոմիտասի «Մատենագրութեան նախապատրաստական աշխատանքը՝ նոր, երկարաշունչ երկասիրութեան մը համար, որ լրիւ պատկերացումը պիտի տայ անոր կեանքին ու երաժշտական բազմարդիւն գործունեութեան»²¹:*

Բարձր գնահատելով Փարիզի կոմիտասեան յանձնաժողովի գործունէութիւնը, Թ. Ազատեանը յօդուածում անդրադառնում է Կոմիտասեան այն մասունքներին, որոնք յայտնաբերել էր ինքը՝ իր ճիգերով եւ զոհողութիւններով:

Հայ գեղջուկ երաժշտութիւն - «Կոմիտաս վրդ-ի ձեռագրով այս շահեկան եւ իր տեսակի մէջ միակը եղող ուսումնասիրութիւնը դրկուեցաւ Փարիզ, ուր Ա. Զօպանեան հրատարակեց նախ «Անահիտ»-ի մէջ ու յետոյ առանձին պրակով լոյս ընծայեց»:

Քնարերգութիւններ Կոմիտաս վրդ-ի - «Իր ստեղծագործութիւններն են այս Բերթուածները, որոնք զինքն կը յայտնաբերեն նոյն ատեն՝ խորագրած Բերթող մը: Անոնք լոյս տեսան իր ծննդեան 70ամեակին առթիւ 1939ին, մաս կազմելով «մշակոյթ» մատենաշարին»:

Երգատեսուր Կոմիտաս վրդ-ի - «Կը պարունակէ 60է աւելի գեղջկական երգեր (արեւելահայ բարբառով), որոնց ձայնագրուած եղանակները կը մնան իրենց նախնական վիճակին մէջ, հայկական հին խաղերով: Օր. Գոհարիկ Ղազարսեան, հայ խաղերու հմուտ միակ արուեստագիտուհին, որ հեղինակութիւն մըն է, զբաղեցաւ հոս այս երգերէն մեծագոյն մասին դաշնաւորումովը: Անոնց բնագիրներն յե-

20 Ա.ԶԱՏԵԱՆ, Թ., *Կոմիտաս վարդապետի դիւանը*, 1947, 59:

21 Անդ:

տոյ անձամբ տարի յանձնեցի Երեւանի Գրական թանգարանին, Էջմիածնի կաթողիկոսական ընտրութեան առթիւ, 1945ին:

Կոմիտաս վրդ. ժողովուրդին բերնէն լսած ու գրի առած գեղջուկ երգերը սովորութիւն ունէր միաժամանակ ձայնագրելու: Այս կերպով իր հաւաքած բազմաթիւ երգերը՝ Հայկական ձայնագրութեամբ ամփոփած է ան գրպանի փոքր տետրերու մէջ: Յետոյ միայն միջոց կ'ունենայ այդ նախնական եղանակները դաշնաւորելու եւ հասարակութեան ընծայելու: Այդ երգատետրերէն շատեր մնացած են իր մտերիմներուն եւ աշակերտներուն հոլ, ոմանք ալ շատ հաւանաբար կորսուած են:

Երկու տարի առաջ երբ առիթ ներկայացաւ լոյս ընծայելու վարդապետին Քնարերգութեանց հաւաքածուն, ձեռքս անցաւ այդ թանկագին երգատետրերէն մէկը, որ կը պարունակէ 60 գեղջուկ երգեր: Ա. Էջին վրայ կայ 1913 թուականը: Հաւանաբար զանոնք վերամշակելու եւ դաշնաւորելու պատենութիւնը չէ ունեցած տաղանդաւոր վարպետը»:

Երկու վաւերագիրներ – «Գրական թանգարանին յանձնեցի նոյնպէս Կոմիտաս վրդ.-ին երաժշտ. մասնագէտի վկայականը, Պերլինի Արքայական Երաժշտանոցէն տրուած 1899ին եւ նոյն Երաժշտանոցի ուսուցչապետ բրոֆ. Ռիխարտ Շմիթի կողմէ իրեն ուղղուած դրուատալից նամակը (ինքնագիր, գերմաներէն):

Թուրք ժողովրդական բանաստեղծ Մէհմետ Էմին պէյ, որ իր մէկ նամակին մէջ «Քաղաքակրթութեան համար անդարմանելի կորուստ մը» կը նկատէր մահը Կոմիտաս վրդ.-ի, որուն մտերիմն ու հիացողը եղած էր, օր մը ինձ յանձնեց իր մէկ քանի բերթուածները՝ դաշնաւորուած Կոմիտաս վրդ.-ի կողմէ: Իր փափաքով զանոնք դրկեցի Երեւանի թանգարանին:

Կենսագրութեան հատորը լոյս ընծայելէ յետոյ, հոն արտագրուած այն նամակը, որով Կոմիտաս վրդ. իզմիրեան Հայրապետին կը դիմէր 1909ին, Էջմիածնի միաբանութենէն փաշուելու համար, գանգատելով իր շրջապատէն, նոյնպէս դրկուեցաւ Պետ. թանգարան: Երաժշտագէտ Ն. Խիսուսերտեան տրամադրած էր ինքնագիր (Կոմիտաս վրդ.-ի) օրինակը այդ նամակին, որուն շուրջ իր հեղինակաւոր կարծիքը յայտնեց ինձ Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան: Ընդհանրական Հայրապետը՝ Տ.Տ. Գեորգ Զ. Կաթողիկոս Էջմիածնի Վեհաբանին մէջ, երբ արտասահմանի պատգամաւորներուն հրաժեշտի այցը կ'ընդունէր, իրեն մատուցի Կոմիտաս վրդ.-ի կենսագրութեան հատորը: Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս դիտել տուաւ ինձ՝ թէ

Կոմիտաս վրդ. չէր կրնար այդ կերպ հրաժարագիր մը մատուցած ըլլալ, հետեւաբար հրատարակելու չէի գայն: Իրաւունք տուի սա տեսակետով, որ ինչպէս Իսթանպուլի, նոյնպէս Էջմիածնի իր աւանդապահ կարգակիցներէն ոմանց կողմէ յարուցած դժուարութիւններուն իբր հետեւանք, գրի առած էր ան այդ հրաժարականը, սակայն շատ հաւանաբար ետ կեցած էր իր մտադրութենէն»:

Թուրք ժողովրդական երգեր – «Կոմիտաս վրդ. առիթը ունեցած է ձայնագրելու նաեւ 40է աւելի թուրքերէն ժողովրդական երգեր՝ հայկական ձայնանիշերով: Այս անտիպ երգատետրը անկորուստ պահպանուած էր երաժշտագէտ Ներսէս Խիսուաներտեանի բով, մինչեւ անոր Երուսաղէմ մեկնումը»:

Նամակ առ Սիրանոյշ – «Հայ քեմի մեծատաղանդ քրմուհիին յիսնամեայ յոբելեանի առթիւ (Բագու, 1909) Կոմիտաս վրդ.ի գրի առած այս ներբողականը ինձ տրամադրեց նոյնիմէն Սիրանոյշ, իր քնակարանին մէջ, իր Եգիպտոս մեկնումէն առաջ: Հայ երգի անգութեան վարպետին իմեցնտիպ ու պատկերալից գրականութեան ամէնէն բարախուն մէկ էջն է այս նամակը, զոր իր շահեկանութեան համար կը դրկեմ «Գեղունիի»»:

Յիշեալ յօդուածում տպագրուած է Սիրանոյշին նուիրուած Կոմիտասի ներբողը:

Յօդուածի վերջում «Կոմիտասեան նոր երգերու շարքէն» վերտառութեամբ գետեղուած են «աղջի մէրդ մեռել ա ...» անտիպ երգի խազերը: Երգը հայկական խազերով եղանակաւորել էր Կոմիտասը, իսկ եւրոպական ձայնագրութեամբ դաշնաւորել Գոհարիկ Ղազարոսեանը: Նշուած է, որ ձայնագրուել է Երեւանի նահանգի Սուրմալու գաւառի Էջմիար գիւղում, 1913 Յուլիսի 27ին:

«Գեղունի»ի այս նոյն համարում տեղ է գտել Հ. Ղեւոնդ Տայեանի «Հայ երաժշտութիւնը եւ բառորդ ձայնի դրութիւնը» յօդուածը²²:

«Գեղունի»ի 1947 թուականի համարը նուիրուած էր Մխիթար Աբբահօր մահուան երկրորդ դարադարձին: Այստեղ տպագրուել է Հ. Ղեւոնդ Տայեանի «Մխիթար Աբրահայր. տաղասաց երգահան» յօդուածը եւ «Երանուհի» ստեղծագործութեան խազերը,

22 ՏԱՅԵԱՆ, Հ. Ղ., Հայ երաժշտութիւնը եւ բառորդ ձայնի դրութիւնը, Ի Գեղունի, 1947, 59:

որի երաժշտութեան եւ բնագրի հեղինակն է Մխիթար Սեբաստացին²³:

Իսկ մինչ արդ՝ 1927ին, լոյս էր տեսել Հ. Ղեւոնդ Տայեանի «Հայ արդի ձայնագրութիւնը եւ Հայր Միմաս Բժշկեան» յօդուածը²⁴:

Այսպէս՝ ամփոփելով մեր համառօտ անդրադարձը «Գեղունի»ի հայ երաժշտական էջերին, կարող ենք եզրակացնել՝

«Գեղունի»ն էջեր է յատկացրել հիմնականում արեւմտահայ երաժշտութեանը՝ մասնաւորաբար Յարութիւն Սինանեանի, Կոմիտասի գործունէութեանը: Արեւելահայ երաժշտութեան ներկայացուցիչ Ք. Կարա-Մուրզային անդրադարձը կատարուել է յուշագրութեան ձեւով:

«Գեղունի»ն տպագրել է երաժշտական ստեղծագործութիւնների խազեր՝ դրանով իսկ նպաստելով հայ երաժշտութեան ծաւալմանը:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐԵԱՆ

²³ ՏԱՅԵԱՆ, Հ. Ղ., Մխիթար Աբրահայր. տաղասաց երգահան, Ի Գեղունի, 1949, 15-19:

²⁴ ՏԱՅԵԱՆ, Հ. Ղ., Հայ արդի ձայնագրութիւնը եւ Հայր Միմաս Բժշկեան, Ի Գեղունի, 1927, 58-63:

Summary

THE ARMENIAN MUSIC IN THE “GEGHUNI” JOURNAL

ANNA ASATRYAN

One of the most noticeable periodicals of the Mechitarist Congregation in Venice was the historical, philological, literary and artistic illustrated journal “Geghuni [The Beautiful]”. It came out in Venice in 1901-1906, 1909, 1927, 1947, and 1950). The 1927 issue of the “Geghuni” was dedicated to the centennial anniversary of founding the “Bazmavep” journal of Armenian studies, while the issue of 1947 – to the 200th anniversary of the death of Mechitar of Sebastia.

“Geghuni” for the most part published materials on Western Armenian music, particularly, about Harutyun Sinanyan's and Komitas's activity. The review of the career of Kara-Murza, the Eastern Armenian representative of music art, was narrated in the shape of memoirs. “Geghuni” also printed music scores, thereby contributing to the promotion of Armenian music.